ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
08 ապրիլի 2019 թվականի N 68 -Ա

«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ, ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 112-րդ հոդվածով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով և 19-րդ հոդվածով՝

կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

1. 2019թ. ապրիլի 9-ից լուծել «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սամվել Աֆանդյանի հետ 2017 թվականի օգոստոսի 15-ին կնքված N 60 աշխատանքային պայմանագիրը և սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

Հիմք՝ Ս. Աֆանդյանի դիմումը:

2. Դավիթ Մաշուրյանին 2019թ. ապրիլի 9-ից նշանակել «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության տնօրենի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը:

Հիմք՝ Դ. Մաշուրյանի դիմումը:

3.Ընկերությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Աբգարյան Մարինե	Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Թադևոսյան Արմեն	մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Դավթյան Նարեկ	մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ
Դավթյան Արփինե	Մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ

Մաշուրյան Դավիթ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ընդունող:

4. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

08.04.2019

X

VERIFIED OCSP 08 04 2019 18:11 09 GMT+4

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано PO[illegible]GSYAN[illegible] 4005640117

2019թ. ապրիլի 8
ք. Կապան